ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՍԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով՝ նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Թասիկ բնակավայրում իրականացնել ավազակոպճազլաքարի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 572-Ա հրամանի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2019 թվականի նոյեմբերի 8-ի օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/610 թույլատվություն ու 2019 թվականի նոյեմբերի 8-ի N Լ-610 լեռնահատկացման ակտի, <<Սիսիան-ՇԻԿ>> ՓԲԸ-ն 25 տարի ժամկետով ստացել է թույլատվություն ՀՀ Սյունիքի մարզում, Հացավան բնակավայրից 3կմ հարավ-արևմուտք, Սիսիան գետի միջին հոսանքում ուղղահունի ձախափնյա հատվածում 1720-1726մ բացարձակ նիշերի վրա իրականացնել ավազակոպճազլաքարի արդյունահանման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավազակոպճազլաքարի արդյունահանման աշխատանքների իրականացման արդյունքում համայնքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչպես նաև կիրականացվի սոցիալական աջակցություն՝ ուստի տաղավարների կառուցապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Թասիկ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում (համաձայն հատակագծի) կատարվող փոփոխությանը և համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողեր կատեգորիայի այլ հողատեսքերից 0.5690հա ու պետական սեփականություն հանդիսացող ջրային հողեր նպատակային նշանակության գետեր գետակներ գործառնական նշանակությամբ 0.4503հա հողամասերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
15.01.2020թ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՍԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
15.01.2020թ

ՍԽԵՄԱ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Թասիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող նպատակային նշանակությունը Գյուղատնտեսական (գործառնական նշանակությունը գյուղ այլ հողատեսք 0.5690հա), ջրային ֆոնդի հողեր(գործառնական նշանակությունը՝ գետեր, գետակներ 0.4503հա), արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի (գործառնական նշանակությունը ընդերքի օգտագործման) կատեգորիա փոխադրվող հողամասի

ղեկավար_____Ա.Սարգսյան

<<____>>_____2019թ.

Մ1:5000



1 փոխադրվող տարածք 0.5690 հա

Շրջադարձային	Կոորդինատներ		գծային չափեր
	X	Y	
1	8582084.9605	4367820.6482	47.53
2	8582115.9364	4367856.6977	91.97
3	8582156.5334	4367939.2176	22.75
4	8582176.0000	4367951.0000	80.47
5	8582250.8646	4367980.5139	19.48
6	8582247.5351	4367961.3156	105.76
7	8582162.2455	4367898.7833	22.59
8	8582150.3029	4367879.6109	34.89
9	8582139.7536	4367846.3558	19.21
10	8582138.3943	4367827.1911	53.83

2 փոխադրվող տարածք 0.4503 հա

Շրջադարձային կետեր	Կոորդինատներ		գծային չափեր
	X	Y	
1	8582138.3943	4367827.1911	19.21
2	8582139.7536	4367846.3558	34.89
3	8582150.3029	4367879.6109	22.59
4	8582162.2455	4367898.7833	105.76
5	8582247.5351	4367961.3156	19.48
6	8582250.8646	4367980.5139	20.06
7	8582269.5222	4367987.8693	41.34
8	8582259.8588	4367947.6736	99.50
9	8582184.9954	4367882.1374	23.53
10	8582171.0331	4367863.1948	27.26
11	8582161.9127	4367837.5039	7.64
12	8582160.8311	4367829.9385	22.60

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
RA MARZ SYUNIK OBSHEC OBSHEC C OGRANICHENNOJ OTBETSTVENNOSTIO * RA MARZ SYUNIK LIMITED LIABILITY COMPANY *
ԳՈԼԴՆ ԼՅՈՒՔՍ
ГОЛДН ЛЮКС
GOLDN LYUQS
09811897

կատարող _____ Ե.Հովհաննիսյան

Որակավորման վկայական 0242 տրված 29.10.2012

<<Գոլդն Լյուքս>>ՍՊԸ

10.12.2019թ